

50 ր., Սօֆիա Ազատան 50 ր., Մարգարիտ Կանկան 30 ր., Աննա Ղուկասեան 30 ր., Մարիամ Թադևոսեան 20 ր., Աննա Սաֆրա-
զեան 20 ր., Մարիամ Բուդաղեան 25 ր., Ե.
Շումարեան 20 ր., Հեղինէ Մկրտչեան 25 ր.,
Մարիամ Թամբեան 100 ր., Մ. ՍՈՒՅԵ 100 ր.,
Գալստիան Կրասնիկեան 25 ր., Աննա և Թա-
դեան Միքայելեան 20 ր., Եղիսաբէթ Ենգի-
բարեան 15 ր., Պողոսեան 10 ր., Սօֆիա Թու-
մանեան 25 ր., Նատալիա Պատուականեան
100 ր., Եղիսաբէթ Արամեան 25 ր., Նազարի
Բաղդեան 25 ր., Եղիսաբէթ Գեանճուցեան 15
ր., Հովհաննէ Բուդաղեան 15 ր., Մովսէսեան
20 ր., Մ. Թումանեան 30 ր., Եղիսաբէթ Պո-
պովեան 25 ր., Եղիսաբէթ Թումանեան 20 ր.,
Վարդանէ Թակոբեան 30 ր., Ս. Մարգարիտ
20 ր., Եղիսաբէթ Կրասնիկեան 15 ր., Աննա
Յակոբեան 20 ր., Հովհաննէ Ազատան 100 ր.,
Մարիամ Թումանեան 50 ր., Նազիկեան Առա-
ֆեան 50 ր., Ե. Ն. 15 ր., Ս. Բուդաղեան
15 ր., Տիկին Շահգեղանեան 150 ր., Ա. և
Նինա Եղիսաբեան 100 ր., Ս. Այվաղեան 10
ր., Ս. Արամեան 20 ր., Աննա Անտոնեան 20 ր.,
Ն. Ն. 5 ր., Ոսկի Ազատան 25 ր., Ս. Մայի-
րեան 10 ր., Ն. Ն. 5 ր., Աննա Լալայեան 20
ր., Աննա Աւագեան 50 ր., Սօնիկեան Առաֆե-
ան 25 ր., Վարդանէ Մարգարեան 25 ր.,
Հեղինէ Ամբրեան 10 ր., Մարթա Ասլանեան
15 ր., Զավահիր Բուդաղեան 10 ր., Եղիսա-
բէթ Սաֆարեան 20 ր., Ս. Մամիկոնեան 20 ր.,
Ա. Մ. Լալայեան 50 ր., Մարիամ Ազատան
10 ր., Անուշ Բեգլարեան 50 ր., Ոսկանեան 10
ր., Գիւլնարեան 10 ր., Ա. Ղուկասեան 25 ր.,
Ա. Բալայեան 10 ր., Մ. Վաչեան 10 ր., Լ.
Մանգասարեան 10 ր., Տէր-Մարտիրոսեան 20
ր., Հեղինէ Արամեան 50 ր., Ս. Սաֆարեան 5
ր., Եղիսաբէթ Ունանեան 15 ր., Ե. Ասիբե-
գեան 20 ր., Մ. Տէր-Մարտիրոսեան 5 ր., Ն.
Ն. 15 ր., Մ. Աւետեան 10 ր., Ս. Թումանեան
20 ր., Քաղաքային հիշգրտող ուսումնարանի
վարժուհիներէ 11 ր., Ենգիսաբէթ Պոպովեան 5
ր., Հ. Արեւիկեան 5 ր., Վարդապարեան 5 ր.,
Թ. Կանկանեան 5 ր., Եղիսաբէթ Իւզըա-
շեան 25 րուբլի:

Շարունակութիւն Կարսի չրջանի նուիրա-
տաւթիւններէ 1) Ճ ու ը ճ ու ը ի ս գիւղից-
ն. Նալբանդեան 3 ր., Ս. Ա. Յարութիւնեան,
Յ. Ալթինեան—2-ական ր., Ա. քան. Կիրա-
կոսեան, Մ. Յարութիւնեան, Ղ. Թէգեղիւնեան,
Ս. Կիրակոսեան—1-ական ր., Գ. Ուստու-
րեան, Յ. Մարգարեան 20-ական կ., Ղ. Կարա-
խանեան, Մ. Ներսէսեան—50-ական կ., Մ.
Մանասեան 45 կ., Ս. Ուստուրեան 35 կ.,
Ն. Մարգարեան 20 կ., Գ. Ուստուրեան 50
կ., Վ. Ուստուրեան 35 կ., Գ. Յովհաննիսեան
60 կ., Ս. Կարապետեան 55 կ., Կ. Մարգա-
րեան, թ. Մարգարեան—20 կ., Ն. Յովսէփեան
85 կ., Փ. Յովսէփեան 55 կ., Մ. Կարապետեան
70 կ., Ս. Կարապետեան, Մ. Մկրտչեան—
50-ական կոպէկ 2) Բ է ը ը ը ը գիւղից-
ն. Ուստուրեան 3 ր., Ս. Աստուրեան, Ղ.
Պողոսեան—2-ական ր., Ս. Համպարեան, Յ.
Նրանտեան, Հ. Յովհաննիսեան, Շ. Ուստու-
րեան, Մ. Սարգսեան, Մ. Մարտիրոսեան,
Ե. Գալստեան—1 ր. 50-ական կ., Ս. Ուս-
տուրեան 1. ր. 25 կոպէկ, Ա. Աստու-
րեան, Մ. Աստուրեան, Գ. Արամեան, Ս.
Թաթեօյեան, Ս. Գարութիւնեան, Պ. Մարգա-
րեան, Ղ. Յակոբեան, Մ. Սահակեան, Ս. Կա-
րապետեան, Ա. Ալթինեան, Ս. Սահակեան,
Մ. Կարապետեան, Մ. Քէչիկեան—1-ական ր.,
Ս. Գրիգորեան 62 կ., Ս. Միքայելեան 60 կ.,
Մ. Կարապետեան, Տէր-Ղուկասի աբի, Ա.
Տէր-Ղուկասեան, Ս. Արամեան, Ա. Մինա-
սեան, Ա. Գարութիւնեան, Յ. Կարապետեան, Յ.
Քէչիկեան, Պ. Թաթեօյեան, Ա. Յակոբեան,
Չ. Սարգսեան, Է. Զարեան—50-ական կ.,
Ոմն տիկին 5 կ., Ենգիսաբէթ Գեանճուցեան 1 ր.
40 կոպէկ 3) Կ ա լ լ ը ը գիւղից—Մ. Սար-
գսեան 2 ր., Ս. Մինասեան, Ս. Կարա-
պետեան, Գ. Փիլիպոսեան, Ա. Մուրադեան
—1-ական ր., Չ. Յովհաննիսեան և Ս. Մու-
րադեան, Ա. Գրիգորեան—50-ական կ., Ենգի-
սեան Գեանճուցեան 50 կոպէկ 4) Ա զ ա ը ը
գիւղից. Յ. Արամեան 2 ր., Պ. Ալթինեան,
Ա. Յակոբեան—1 ր. 50-ական կ., Ղ.
Առաքելեան, Մ. Ուստուրեան—1-ական ր., Հ.
Սարգսեան 60 կ., Ս. Գրիգորեան, Գ. Յովսէ-
փեան, Ա. Յովսէփեան, Վ. Գրիգորեան, Ն.
Յովհաննիսեան, թ. Մարտիրոսեան, Ս. Յով-
հաննիսեան, Յ. Պողոսեան, Մ. Պապիկեան, Մ.
Ուստուրեան—50-ական կ., Յ. Առաքելեան 20
կ., Ենգիսաբէթ Գեանճուցեան 2 ր. 13 կոպէկ:

Ընդամենը 2651 րուբլի:
Մինչև այժմ ստացել ենք 32,110 ր. 4/3,
կոպէկ, երեք ոսկի ուսուցիչ և 50 խաղաղ-
վար: Ուղարկել ենք 26,500 րուբլի, 3 ոս-
կի ուսուցիչ և 50 խաղաղվար լիբանոնէ Երէկ յանձ-
նեցինք զգալուոր կոմիտեան 5500 րուբլի:
Մեզ մօտ մնում է 110 ր. 4/3, կ:

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

Մարտի 10-ին

Երբորդ հայերէն ներկայացումը, որ կայա-
ցաւ մարտի 9-ին, ահազին հետաքրքրութիւն
զարթեցրեց հասարակութեան մէջ: Բոստօլի
(տեղական) ուսուցիչ թերթերը առանձին ուղե-
ւորութեամբ և գովասանքով բեցէնդիաներ
նուիրեցին տիկին Սիրանոյշի խաղին: Ներկա-

յացման գիշերը չը տեսնված ողբերգութիւն էր
տիրում թատրոնում: Հասարակութիւնն ուղ-
ղակի հիւսիսը և յափշտակված էր տիկին Սի-
րանոյշի գեղարուեստական խաղով: Իւրաքան-
չիւր գործողութեան վերջը, բառիս բուն նշա-
նակութեամբ, ամբողջ թատրոնը զդրդում էր.
ծափահարութիւններով և կեղեցիկներով վերջ չը
կար: Տարաբաղդաբար, թատրոնն այս անգամ
կիսով չափ դատարկ էր և չատերը երեւի
ափոստացին, որ առաջին ներկայացման տաղա-
ւորութեան տակ եկած չէին թատրոն:

Բայց այս անգամին բոլորովին այլ բան էր.
անսամբլը պահպանված էր և Մէդեան որված
էր, կարծես, ապաշտուցանելու համար, որ հա-
սարակութիւնը հանգիստանա և լինում մի ար-
տակարգ տաղանդի խաղին: Տիկինը բոլոր հինգ
գործողութեան մէջ էլ Մէդեայի գերում չը
թուլացող պափօտով տարաւ իր գերը:—Մէ-
դեային, այս կատաղի և վրիժառու կնոջ տի-
պարն աւելի վրիժառի ծաւալ էր ստանում և
մանաւանդ վերջին գործողութեան մէջ տիկնոջ
խաղը հասաւ իր գեղարուեստականութեան
գագաթնակէտին: Այս գերով յարգելի տիկինը
մեծ տեմպերամէնտ և արտակարգ տաղանդ
արտայայտեց, որով միանգամայն սթափեցրեց
և ամբարցրեց հասարակութեան մէջ տիրող
կարծիքը: Նրա արտի խորքերը թափանցող
ձայնը այնքան ազդու էր, երբեմն քնքշանում
և երբեմն էլ այնքան հարկու էր, որ մարդ
ակամայ տարվում և յափշտակվում էր նրա
խաղով:

Միւս գերակատարներից աչքի ընկան տ.
Մէդեան, որը Կրէտեայի գերն էր կատա-
րում և պ. Պետրոսեան—Արգօն:

Յաջորդ ներկայացումը լինելու է մարտի
12-ին. պիտի ներկայացնեն «Տիկին Սան-ժէն»
Սարգուի:

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻՑ

Փետրվարի 25-ին

Աշունքից սկսած ալիւրը ծախվում է 1 ր.
50—1 ր. 60 կօպ. պուզը, մի գին, որ մնացելի
չէ չքաւոր դասակարգին: Թէ հացի գինը պա-
կասեցնելու և թէ չքաւորներին էժան գնով
հաց մատակարարելու համար, քաղաքային վար-
չութիւնը խնդրեց 5,000 ր. փող դուրս բե-
րեց զանձարանից և այժմ արդէն այդ գումա-
րով ալիւր է ծախում քաղաքային կէտքի
տակ, որովհետև գինը 1 ր. 50 կօպ. պուզը, ի
նկատի ունենալով այն հանգամանքը, որ չը
պէտք է ոչ չափ ունենալ և ոչ վնաս: Վարչու-
թեան ձեռնարկութիւնը թէեւ մի կողմից այն
առաւելութիւնն ունի, որ հացն այդ գնով կը
մնայ մինչև առաջիկայ հունիսը, բայց միւս
կողմից, եթէ խորը քննելու լինենք, կը տես-
նենք, որ այնքան էլ նպաստաւոր չէ այդ հան-
գամանքը, քանի որ այդ գներով քաղաքի կը-
չեռքի տակ միշտ ծախում են նոյն իսկ մաս-
նաւոր մարդիկ—ալիւրաւորներ, և որ այդ գը-
նով նա առնեն փող ունենալու հարցը նրա-
նումն է, որ չքաւոր դասակարգի փող չու-
նի, գնելու միջոցներից զրկված, ուժից ընկած
է, ուստի նրան պէտք է չօգտակել օգնութիւն
հասցնել:

Ահա շուտով ցանքը կը սկսվի և քաղաք-
իւր ընտանիքներ մի հատիկ սերմ չունեն,
մինչդեռ նրանց հողաբաժնիները մնալու են
մարդաւ Աւելի նպատակաւորմար է այդ գու-
նարով սերմացու ցորեն և գարի բաժանել չը-
քաւորներին տպառիկ, այն պայմանով, որ ա-
ռաջիկայ աշնան բերքին սերմը վերաբարձնեն,
առանց որ և է վերադրի, իսկ նրա արդիւն-
քով իրանց ապրուստը հոգան: Ահա այդպիսով
կարելի է աղքատ ընտանիքների ծանր բեռը
կիսելու: Աւելի, ապահովելով նրանց քաղաքային
անստեղծութիւնը: Ապա թէ ոչ չքաւոր դասա-
կարգը, ինչպէս սովորաբար ուրիշ տարիները,
չուտով գինիւր է զանազան «ամբարդարեա-
րին» և մի խաղաղ ցորենը փոխանակ 40-ի
50 րուբլիով կը վերցնի 3—4 ամիս ժամանակ
կով, իսկ այնուհետեւ շաշն ու չալակը վրան
կը բարդէ, աւելի մնասելով իր անստեղծութեանը...

Գուցէ առարկողներ լինեն, թէ ապառիկ բաց
թողնելով չքաւորներին մի գուցէ աշնան բեր-
քին չը կարողանան յետ ստանալ: Բայց դա
լոկ խօսք է, քանի որ մասնաւոր մարդիկ ա-
մենայն հեշտութեամբ կարողանում են յետ
ստանալ իրանց ստեղծ սերմացուն աւելի թանգ
գնով: Բացի այդ, երբ մասնաւոր փոխառու
հաղաւթաւորներ իրանց ստեղծ կարողանում
են աշնան բերքի միջոցին, եթէ ոչ համաձայ-
նութեամբ, գոնէ դատարանի միջոցով առնել,
ինչու ուրեմն անկարող կը լինի այդ անել մի-

վարչական հիմնարկութիւն: Այդ դէպքում,
կարծում ենք, քաղաքային վարչութիւնը իր
ապառիկները, իբրեւ մի պաշտօնական
փոխառութիւն, կարող է աւելի վարչա-
կան ձեւով հաւաքել, քան մասնաւոր մարդիկ:
Իսկ այդ դէպքերում պարտապանները մի կող-
մից երկրիւր կրելով, որ պարտ են մի պաշտօ-
նական հիմնարկութեան և ոչ մասնաւոր մար-
դու, իսկ միւս կողմից աւելի էժան գներով
վերցրած լինելով՝ շատ հեշտութեամբ կարող
են վճարել վարչութեան մի խաղաղ ցորենի
գինը 40 րուբլիով, քան թէ 50 ր. մի որ և է
վախճանով չափ ու սովորով...

Կրկնում ենք, պուզին մի 5—10 կօպ. էժան
գնով ալիւր բաց թողնելով՝ սովածին ոչինչ բը-
գալի օգնութիւն արած չենք լինի, որովհետեւ
այդ գներով (1 ր. 50 կ. և 1 ր. 60 կօպ.) հաց
տալիս են շատ շատերը և յաճախ կէս փողը
հաւաւ ապառիկ, ինչպէս սովորաբար լինում է
հացի տեղական առ ու ծախսը: Կոռն

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Բազու, մարտի 10-ին

Ախալքալաքի գաւառում պատահած անա-
կնկալ աղետը Բազուի հայութիւնները զգալուն
արտելում էլ արձագանք գտաւ: Նրանք յիշե-
ցին իրանց պարտականութիւնը և օգնութեան
ձեռք մեկնեցին իրանց թշուառ քաղաքին, եղ-
բայրներին և մանաւանդ անտէր ու անտիրա-
կան մնացած որբիկներին:

Ուստի մենք, ժողովարարներս, հրապարակով
յայտնում ենք մեր շնորհակալութիւնը նուիրա-
տու տիկիններին և արա հետ ուղարկելով ձեզ
մեր հաւաքած գումարը 2,651 րուբլի, խնդ-
րում ենք յանձնել այդ փողը ուր հարկն է և
նուիրատուների ցուցակը ու մեր շնորհակալու-
թիւնը տպագրել «Մշակ»-ում:

Թ. Կանկանեան
Ե. Իւզըաշեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մարտի 18-ին Վեհափառ Կաթողիկոսին այ-
ցեցինք Թիֆլիսի նահանգապետ Ի. Սվեչին և
Թիֆլիսի կօմենդանտ Ռէյտեր: Մարտի 19-ին
Վեհափառ այցեցին կովկասեան կառավարչա-
պետի օգնական Ա. Յրեգէլին, Վրաստանի էկ-
զարկ Յովսէփեան և Թիֆլիսի նահանգապետ
Սվեչին: Մարտի 20-ին Վեհափառին այցե-
լութիւն արին կառավարչապետի օգնականը և
էկզարկը:

Կիրակի, մարտի 19-ին, Մոզնու ս. Գեորգ
եկեղեցու պատգամաւորական ընտրութեան
ժամանակ՝ ձայների առաւելութեամբ ընտրված
են իշխաններ Արսէն և Ալեքսանդր Բէհու-
ղեանները: Մ'ուրեք է ընտրելու էլ մի պատ-
գամաւոր: Վաճառ մայր եկեղեցում ընտրու-
թիւնները յետաձգված են մինչև ամսի 26-ը:

Գիտութիւնների Ակադեմիան և ուսուսաց
համալսարանները հրաւիրված են մասնակցելու
յայտնի անգլիացի գիտնական Մաքս Միւլլը-
րի տաշխիկայ յօդուանին, որ պէտք է տօնվի
նրա ուսուցչական և գիտնական-գրական գոր-
ծունեութեան յիսնամակի առթիւ: Մաքս
Միւլլըր պատուաւոր և թղթակից—անգամ է
համարեա բոլոր ուսական համալսարաններ
և գիտութիւնների Ակադեմիայի: Այդ աշ-
խարհահռչակ գիտնականի յօդուանական օթ-
նախորդութիւնը միջազգային բնաւորութիւն
կունենայ:

Ի նկատի առնելով երկրագործութեան և
պետական կալուածների միջնադարութեան մէջ
ստացված տեղեկութիւնը, թէ շատ տեղերում
նկատվում է դաշտային շինուկի բազմացում,
յիշեալ միջնադարութիւնը թող է տուել իր գիւ-
ղատնտեսական լաբօրատօրիային Պետերբուր-
գից բակտերիական միջոց ուղարկել զանա-
զան կողմեր՝ առանց որ և է վարձ պահանջե-
լու ստացողներին:

Ստացանք «X. И. Кучуль-Иванесовъ. Ар-
мянскій апокрифъ, послание судьи Пизата къ
Тиверію Кесарю по распятию на крестѣ Гос-
пода Бога нашего» վերնագրով գրքոյը, որ
տպագրված է Մոսկվայում 1900 թ.:

ՇՈՒՇՈՒՑ Բնդ գրում են. «Մեր թեմական
զարդից հոգաբարձական հարցը վերջացաւ:
Ինչպէս յայտնի է, 1894 թւից սկսած՝ երկու
հոգաբարձութիւններ հրաժարական տուին,
քանի որ չը գիտէին թէ ինչ իրաւունքներով
պիտի կատարեն զարդից: Անցեալ տարի էջ-
միսնից ստացված հրամանի համաձայն՝ Մատ-

թէնս վարդապետը պիտի հոգաբարձական ընա-
րութիւններ կատարէր, բայց ժողովրդի ներ-
կայացուցիչները խնդրեցին նրան նախ և ա-
ռաջ դիմել Վեհափառ Կաթողիկոսին և խնդ-
րել, որ նա բարեհաճէ ցոյց տալ թէ ժողովրդի
կողմից ընտրված հոգաբարձուները ինչ պար-
տականութիւն պիտի կատարեն զարդից վերա-
բերմամբ, այսինքն՝ Մատթէոս Կաթողիկոսը
հաստատած կանոնագրութիւնը պիտի գործա-
դրվի, թէ նոր կանոններ պիտի տրվեն հոգա-
բարձութեան: Այսպէս էլ չը կայացաւ հոգա-
բարձական ընտրութիւնը: Մինչև սպասու-
էին, թէ էջմիածինը ինչպէս կը պարզէ աշ-
հարցը, թեմական զարդից տեսուչ Տիրայր վար-
դապետը, դիմելով շատերին, խնդրեց ստանա-
նել հոգաբարձուի պաշտօն: Համաձայնութիւն
ստուգողները երեք հոգի էին՝ Զաւադ-բէկ Իւ-
խանով, Գրիգոր Գալանիսարով և Սարգիս
Իւզըաշի: Այդ երեքին էլ ամենայն հայոց կա-
թողիկոսը կ'օնդակով հոգաբարձու նշանակեց:
1860 թւականից առ առաջին դէպքն է, որ
հոգաբարձուն չէ ընտրվում ժողովրդից, այլ
ուղղակի նշանակվում է էջմիածնի կողմից:

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ Բնդ գրում են. «Այս
հարց, որը երկար ժամանակ զբաղեց-
նում էր և որի վախճանին հետաքրքրութեան
պատճառ էր մեր հասարակութեան փոքրամի-
նակեցնելու դասակարգը, այսօր լուծված է:
Խօսքս տեղիս թեմական զարդից համար
հոգաբարձուներ ընտրելու մասին է: Ընտր-
ութեանը պէտք է մասնակցէին վեց եկեղեցի-
րից ընտրված 60 պատգամաւորներ, բա-
նակայ էին 51 հոգի: Բնդարկեցին շատեր
որոնց մէջ ձայների մեծամասնութեամբ ընտր-
վեցին հոգաբարձուներ՝ Թարութիւն Եղեկեան
Պետրոս Զորայեան, Դաւիթ Խօջաեան, Գրի-
գոր Եաբլօիով, Անդրէաս Սալթիկեան: Մի
բան, որ մեզ սաստիկ զարմացնում է, այ-
սին է, որ ընտրողների մի բանակ, ի նը-
կատի ունենալով իրանց անձնական հաշիւները
աչքերը մուծ կոխած, աջ ու ձախ սեւ քուշ
էր, որ տուփի մէջ էին դրում, և ամեն
ձանք գործ գնում զարդից շահերին նուիր-
ված պարոններին դուրս հանել: Աւելորդ
չենք համարում այստեղ աւելացնել, որ այդ
ժողովում պ. բեիշկ Ա. Քէչէկեան և 16
տարի զարդից իբրեւ հոգաբարձու են վեց
տարի առանց վարձատրութեան իբրեւ բժիշկ
ծառայելու համար արժանացել է ժողովական-
ների շնորհակալութեանը: Դարձող տարեկան
բժշկի վարձ որոշել է վճարել 200 րուբլի, ու-
րեմն պ. Քեչէկեան զարդից 16 տարի ծառա-
յած ժամանակամիջոցում չէ ստացել 3200 ր.:
Հասարակութեան այդպիսի անդամները պա-
տիւ են բերում»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Frankfurter Zeitung» լրագրի Կ. Պօլս
թղթակիցը հաղորդում է սուլթանին այն իրա-
դէի պատճէնը, որ վերաբերում է փոքր-աթիւ-
կան երկաթուղիների շինութեան հարցին: Իրա-
դէն մի քանի օր առաջ ուղարկված է ուսուս-
կապալարութեան և կազմված է հետեւեւ
կերպով. «Ղեկավարվելով ամենից առաջ մի
ժողովրդի բարեկեցութեան հոգսերով և կա-
մենալով ապագայից առաջ նախաձեռն, անգա-
տելի բարեկամութեան, որով կապված ենք
մենք Նորին Մեծութիւն ուսուսաց Կայսրի հետ
որը շատ անգամ մատուցել է մեզ անմոռանալի
ծառայութիւններ, և որոնց փոխարէն մենք
են, որքան կարողացել ենք, մեր կողմից մա-
տուցել ենք այլ ծառայութիւններ, մենք, Նորին
Մեծութեան խորհրդականներին հետ բանակցե-
լուց յետոյ, բարւոք համարեցինք համաձայնու-
թիւն կայացնել այն միջոցների վերաբերմամբ
որոնք պէտք է ձեռնարկվեն մեր փոքր-աթիւ-
կան երկրի բնական հարստութիւնները զար-
դացնելու համար Սեւ ծովի ափերում: Այս
պատճառով մենք յայտնում ենք ի գիտութիւն
ամենքի, որոց անկ է, թէ այդ անաւելուցի
ներից յետոյ մենք կարեւոր համարեցինք որ
հացնել նրա Մեծութեան ուսուսաց Կայսրի
խորհրդականներին կողմից յայտնված ցանկի
թիւնը և դրա համաձայն որոշում ենք: Մենք
Սեւ ծովի ջրաբաշխական շրջանում միայն
ձանապարհների շինութեան և շահագործու-
թեան արտօնութ

Թիֆլիսից դուրս է գալիս 1 ժ. ցերեկ. 7 ժամ երեկ.
Վաղդիկավկազ հասնում է 3 * 25 ը. եր. 9 ժ. 50 ը. եր.

Типографія Грузинск. Т.—ва, Большая-Ванская ул., № 27.